Աղայի յարաբերութիւնները եւ նրա պայմանները, հողի մշակութեան մասին, ռայայի (հպատակի) հետ, ամէն տեղ միակերպ չէին: Իւրաքանչիւր գիւղ ունէր իր առանձին օրէնքները եւ պայմանները: Մշկութեան բերքերից ստացոելու տասանորդները մի տեղ գիւղացիք վճարում էին հարիւրին տասն, միւս տեղ տասն եւ հինգ, այլ տեղ քսան, երեսուն, քառասուն: Շատ տեղերում աղան կէս էր կիսում բերքը, մի մասն ինքն էր վերառնում, միւս մասը տալիս էր գիւղացուն: Ոմանք աղաներից բերքի երեք քառորդ մասն իրանք էին ստանում, մի քառորդը միայն տալիս էին մշակին: Ընտանի անասունների ամէն տեսակների համար հարկ էր վճարւում. հարկից ազատ էին միայն այն անասունները, որոնք գործում էին մշակութեան դաշտի մէջ, օրինակ, եզը, արու գոմէշը, որձ ձին. էգերը բոլորը հարկ էին վճարում: Ազատ չէր հարկից ինքը մշակը. նա աւելի անբախտ էր, քան իր եզը: Հարկեր վճարում էր եւ թռչունների համար. տասն հաւ ունեցողը հինգ հատը տալիս էր աղային. նա պարտաւոր էր ամէն տարի տալ եւ մի քանի տասնեակ ձոեր իր հաւերի բերքից: Տուրքերի տեսակներն այնքան շատ էին, որ երկար, շատ երկար կը լինէր մի ըստ միոջէ թոել. միայն այսքանը կ'ասեմ, որ գիւղացու ամէն մի աշխատութիւնը, ամէն մի պարապմունքը, թէ արհեստ, թէ երկրագործութիւն, թէ վաճառականութիւն, բոլորը, բոլորը ենթարկոած էին հարկերի տակ: Եւ հարկերի ծանրութիւնը կամ թեթեւութիւնը զանազանւում էր այլեւայլ տեղերում այն չափով, որքան տարբերւում էին միմեանցից աղաներն իրանց լաւ կամ վատ յատկութիւններով:

Բացի հարկերից, աւելի անտանելի էին զանազան տեսակ մաքսերը: Իւրաքանչիւր բերք, որ ստացւում էր հողից, միեւնոյն երկրի մէջ վաճառոելու ժամանակ մաքս էր վճարւում: Արհեստաւորների ամէն մի արդիւնաբերութիւնը, օրինակ ջուլիակի գործած կտաւը, կօշկակարի կօշիկները, դարբնի ձեռագործը եւ այլն, ազատ չէին մաքսերից: Մաքս էին վճարում եւ ղանազան գործարանները, որպիսիքն էին ներկարարութեան, կաշեգործութեան, չիթ շինելու, արաղ քաշելու, գինեգործութեան, ձիթահանութեան եւ այլն:

Բացի աղաների բաժինը, որ ստացւում էր մշակութեան բերքից, բացի հարկերից, որ վճարւում էր աղաներին, բացի մաքսերից, կային եւ արքունի տուրքեր, որ ստանում էին տէրութիւնից գաւառներում նշանակոած կուսակալները: Արքունի տուրքը կառավարութիւնից որոշոած էր ամէն մի գիւղի վրայ նշանակեալ գումար: Բացի կուսակալները, ուշադրութիւն չդարձնելով կառավարութեան կարգադրութեանը, առնում էին որքան եւ ցանկանում էին: Պատճառն ի՞նչ էր: Կառավարութիւնը գաւառների ամբողջ տուրքը տալիս էր կուսակալներին կապալով. կուսակալները իրանց կողմից գաւառի